

ԱՐԴԱՐ ԴՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԻ Ձև
DS 1805 (Rev. 11/06)

Դատավարություն Պահանջող Անձի Անուն, Ազգանունը (Հայցվոր)	Ծննդյան Ամիս, Ամսաթիվ, Տարի	Տնային Պայմաններում և Համայնքի Հիման Վրա Medicaid-ի Ծառայություններ Արդյո՞ք Waiver Ծրագրի Մասնակից եք (Ստուգեք միայն մեկը) <input type="checkbox"/> Այո <input type="checkbox"/> Ոչ
---	-----------------------------	---

Հասցե	Ցերեկային Ժամերի Հեռախոսահամար.
-------	---------------------------------

Տարածքային Կենտրոնի կամ Զարգացման Նահանգային Կենտրոնի Անվանումը.

Նահանգի համապատասխան մակարդակը, որի համաձայն Արդար Դատավարությունը կծրագրավորվի: Մինչ արդար դատավարությունը այս գործը վճռելու նպատակով, ես նույնպես պահանջում եմ հետևյալը. (Ստուգեք բոլոր կիրառելի արկղերը)

- Ոչ պաշտոնական ժողով՝ տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենի կամ իր ներկայացուցչի մասնակցությամբ:
- Միջնորդություն՝ չեզոք, անկախ միջնորդի մասնակցությամբ, որը կաջակցի համաձայնության գալու համար:

Արդար դատավարություն պահանջելու պատճառը (պատճառները).

Նկարագրեք, թե ի՞նչ է հարկավոր ձեր բողոքը որոշելու համար.

Պահանջող Անձի Անուն, Ազգանունը, եթե Հայցվորից տարբեր է.	Ազգակցական կապը Հայցվորի հետ.
Հասցե	Ցերեկային Ժամերի Հեռախոսահամար.

Պահանջող Անձի Ստորագրությունը ➤ _____ Պահանջի Ամիս, Ամսաթիվ, Տարի _____

Արդյոք թարգմանիչի ծառայություններ պահանջված են Ոչ Այո Եթե այո, ապա որ լեզվի համար _____

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Ես լիազորում եմ հետևյալ անձին (Անուն, Ազգանուն) _____
(Հասցե) _____ (Ցերեկային Ժամերի Հեռախոսահամար) _____

որպեսզի ներկայացնի իմ, հայցվորիս, շահերը հսկյալ գործի ընթացքում

Հայցվորի/Տարածքային Խորհուրդի Ստորագրությունը ➤ _____ Ամիս, Ամսաթիվ, Տարի _____

ԲԱՑԱԿԱՅՄԱՆ ՕՐԵՐԸ

Ես բացակա կլինեմ հետևյալ ժամերին կամ օրերին: (Երբ նշում եք բացակայման ժամերը/օրերը, խնդրվում է հաշվի առնել, որ ոչ պաշտոնական ժողովը կկայան ձեր պահանջը ստանալուց 10 օրվա ընթացքում, միջնորդությունը 30 օրվա և արդար դատավարությունը 50 օրվա ընթացքում)

Հայցվորի կամ

Լիազորված Ներկայացուցչի Ստորագրությունը ➤ _____

(Կցեք Առաջարկված Գործողության մասին Ծանուցման Պատճեն. Բողոքարկման Իրավունքների և Հրահանգների Համար տես Չրդ էջը)

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Արդար դատավարության ընթացքում աջակցելու համար ձեզ որպես ձեր ներկայացուցիչ կարող է հատկացվել տեղական տարածքային խորհրդի կողմից նշանակված անձ կամ գործակալություն:
2. Դուք արդար դատավարության իրավունք ունեք:
3. Դուք իրավունք ունեք ներկա լինել բոլոր վարույթների ընթացքում և ներկայացնել գրավոր և բանավոր ապացույցներ:
4. Դուք իրավունք ունեք վկաներին դեմադրել կանգնելու և խաչաձև հարցաքննելու:
5. Դուք իրավունք ունեք ներկայանալու անձամբ, փաստաբանի կամ ձեր նախընտրած ներկայացուցիչի հետ:
6. Դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը իրավունք ունեք որևէ ժողովից կամ դատավարությունից առաջ ձեռք բերել և ստուգել արձանագրությունները:
7. Դուք իրավունք ունեք օգտվելու թարգմանիչի ծառայություններից:
8. Դուք իրավունք ունեք ստանալու տեղեկություն խորհրդատու աջակցական ծառայության մատչելիության վերաբերյալ, հաճախորդների իրավունքների խորհրդատուի, տարածքային խորհրդի, հասարակության կողմից ֆինանսավորված իրավական ծառայությունների, բաժնետիրական ընկերությունների և հասարակության կամ մասնավոր անձանց կողմից ֆինանսավորված խորհրդատու այլ կազմակերպությունների հիշատակումը ներառյալ, ինչպես նաև, ընդգրկելով ֆեդերալ Հասարակական Օրենքի 95-602 հոդվածներով սահմանված պաշտպանող և խորհրդատու համակարգը:
9. Դուք տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենի կամ իր ներկայացուցչի մասնակցությամբ ոչ պաշտոնական ժողովի իրավունք ունեք, որը կկայանա տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից դատավարության մասին պահանջը ստանալուց 10 օրվա ընթացքում: Ոչ պաշտոնական ժողովի առաջարկված օրվա, ժամի և վայրի վերաբերյալ գրավոր Ծանուցագիրը պետք է ներկայացնի տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենը կամ իր ներկայացուցիչը:
10. Դուք իրավունք ունեք մինչ արդար դատավարությունը պահանջելու կամավոր միջնորդություն:
11. **Դուք իրավունք ունեք ուղղակիորեն անցնելու արդար դատավարության ընթացքին, չմասնակցելով ոչ պաշտոնական ժողովին կամ կամավոր միջնորդությանը:**

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Եթե դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը բավարարված չեք տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի որևէ որոշմամբ կամ գործողությամբ, որը ձեր կամ ձեր լիազորված ներկայացուցչի կարծիքով անօրինական է, խտրական է կամ ձեր շահերին չի համապատասխանում, ապա դուք կամ ձեր լիազորված ներկայացուցիչը կարող եք այս ձևը օգտագործել արդար դատավարություն, տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենի կամ իր ներկայացուցչի մասնակցությամբ ոչ պաշտոնական ժողով և/կամ, ցանկության դեպքում, միջնորդության խորհրդակցություն պահանջելու համար:
2. Ընդունված որոշման կամ բողոքարկման գործողության ծանուցագիրը ստանալուց 30 օրվա ընթացքում պահանջի ձևը պետք է ուղղվի գործողության համար պատասխանատու տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի տնօրենին: Տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնը տնօրենի կողմից պահանջը ստանալուց 5 աշխատանքային օրվա ընթացքում ձեր արդար դատավարության մասին պահանջը հեռապատճեի միջոցով կուղարկի բաժին և Վարչական Դատավարությունների Գրասենյակի տնօրենին կամ իր ներկայացուցչին:
3. Եթե դուք այդ ընթացքում ծառայություններ եք ստանում և բողոքարկման պատճառը հանդիսանում է տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոնի կողմից այդ ծառայությունների նվազեցումը կամ դադարումը, ապա, որպեսզի շարունակեք արդար դատավարության ընթացքում այդ ծառայությունները ստանալ, ձեզ հարկավոր է այս ձևը վերադարձնել տարածքային կամ զարգացման նահանգային կենտրոն առաջարկված գործողության մասին ծանուցումը ստանալուց 10 օրվա ընթացքում:
4. Եթե դուք ներկայացուցիչ չունեք կամ չեք ցանկանում լիազորված ներկայացուցիչ ունենալ, ապա ձևի այդ բաժինը մի ամբողջացրեք:
5. Եթե թարգմանիչի ծառայություններ եք պահանջում, ապա խնդրվում է նշել համապատասխան արկղը և բացատրել թարգմանիչի ծառայություններից օգտվելու ձեր անհրաժեշտությունը:
6. Եթե գոյություն ունի հատուկ ժամ և /կամ օր, որի ընթացքում դուք կբացակայեք, ապա կարևոր է, որ ձևի վրա տրված հատվածում հատկանշեք այդ ժամը կամ օրը: Սա իրականացվում է ձեր շահերին համապատասխան, որպեսզի ձեր ոչ պաշտոնական ժողովի, միջնորդության խորհրդակցության և/կամ արդար դատավարության համար հմարավոր լինի ծրագրավորել ձեզ հարմար ժամ և օր:
7. **Եթե այս ձևը ամբողջացնելու համար ձեզ աջակցություն է անհրաժեշտ, ապա դիմեք ձեր ծառայությունները համակարգող անձին կամ Հաճախորդի Իրավունքների Խորհրդատուին:**